Արձանագրություն N 2-3

ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-25/25 ծածկագրով ՀՀ Կոտայքի մարզի «Նոր Գեղիի ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 29.08.2025թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝

Մ. Աղայանց

Հանձնաժողովի անդամներ՝

Հ. Գինովյան
Տ. Կոմիտասյան
Ա. Քոչարյան
Է. Առուստամյան
Ա. Հյուսիսյան
Գ. Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները կատարող՝

1. Մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին

(Մ. Աղայանց)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի մասնակցի՝ «ԶԱՆԳՎԱԾ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 27.08.2025թ. ծանուցվել է վերջինիս՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է «ԶԱՆԳՎԱԾ» ՍՊԸ-ի կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ –6, դեմ – 0:

2. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Մ. Աղայանց)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 7-րդ ենթակետը, գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «ԶԱՆԳՎԱԾ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է հետևյալ կերպ՝

Մասնակցի անվանումը	Տեխնիկական առաջարկ (ՏԱ)	Գնային առաջարկ (ԳԱ)	*Մասնակցի հայտի ընդհանուր գնահատմանը*
«ԶԱՆԳՎԱԾ» ՍՊԸ	55.43	30	85.43

2.2 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 7-րդ ենթակետը, գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ԶԱՆԳՎԱԾ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 6, դեմ – 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Մ. Աղայանց)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը, գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ՋԱՆԳՎԱԾ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 6, դեմ – 0:

4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Մ. Աղայանց)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 6, դեմ – 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ. Աղայանց

Անդամ՝ ---------- Հ. Գինովյան

---------- Տ. Կոմիտասյան

---------- Ա. Քոչարյան

---------- Է. Առուստամյան

---------- Ա. Հյուսիսյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղարի
պարտականությունները կատարող՝ ---------- Գ. Հակոբյան